ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՒՈՐ-ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՏԵՍՈՒՉ, ԳԷՈՐԳԵԱՆ ՀՈԳԵՒՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՏԵՍՈՒՉ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԳԷՈՐԳ ԵՊՍ. ՍԱՐՈՅԵԱՆԻ ՁԵԿՈՅՑԸ 2013-2014 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒԱՅ ՓԱԿՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆԸ

(11 յուլիսի, 2014 թ.)

Ձեռք, որ զերկինս եւ զերկիր հաստատեցին,
նոյն եւ տախտակս քարեղէնս փորագրեցին
եւ ետուն մեզ դպրութիւն, որ ունի զօրէնս
խաղաղականս եւ փրկականս:

Ձեռքերը, որ երկինքն ու երկիրը հաստատեցին, այդ նոյն ձեռքերը փորագրեցին քարեղէն տախտակների վրայ եւ մեզ շնորհեցին խաղաղական եւ փրկական դպրութիւնը:

Արդէն 140 տարի է, ինչ Գէորգեան հոգեւոր ճեմարանը երկիւղածութեամբ եւ սրբօրէն պահում ու պահպանում է՝ երկինքն ու երկիրը հաստատած ամենակարող ձեռքերով մեզ շնորհուած դպրութիւնը: 140 տարիներ, որոնց միայն չնչին մասը կարելի է խաղաղ եւ ազատ ստեղծագործ շրջան համարել, եւ այն էլ մե՛ծ, շա՛տ մեծ վերապահութեամբ... Հիմա անգամ դժուար է պատկերացնել, թէ ներկայումս խիստ պարզ ու հասարակ թուացող այս գաղափարը՝ Գէորգեան հոգեւոր ճեմարանի հիմնումը, որքան դժուարին ու բարդ էր ժամանակին իրականացնելը... Բայց Բացարձակ Էութիւնը, որ հաստատեց երկինքն ու երկիրը, կամեցաւ նաեւ, որ Հայոց 1323 եւ Քրիստոսի 1874 թուականին Միածնաէջ Սուրբ Քաղաքում հիմնուի Ճեմարան հոգեւոր՝ յանուն ամենայաղթ սրբոյն Գէորգայ, որպէսզի Սահակ-Մաշտոցեան դպրոցի, Գլաձորի ու Տաթեւի համալսարանների, հեռաւոր եւ անհաս անապատների ու վանքերի դարաւոր աւանդները՝ խաղաղական եւ փրկական, յառնեն նոր փառքով ու փայլով:

2013-2014 ուսումնական տարուայ Բ. կիսամեակում Գէորգեան հոգեւոր ճեմարանի (Աստուածաբանական համալսարան) տեսչակազմը բաղկացած է եղել հետեւեալ անձանցից.

Մայր Աթոռի հոգեւոր-կրթական հաստատութիւնների վերատեսուչ, ԳՀՃ տեսուչ՝ Գերաշնորհ Տ. Գէորգ եպիսկոպոս Սարոյեան,

Ուսումնական գծով փոխտեսուչ՝ բ. գ. թ. Գէորգ Մաղոյեան,

Վերակացուներ՝

Հոգեշնորհ Տ. Վաչէ աբեղայ Մկրտչեան,

Արժանապատիւ Տ. Գաբրիէլ քահանայ Վարդանեան,

Բարեշնորհ Տիգրան սարկաւագ Յակոբեան,

Բարեշնորհ Գարեգին սարկաւագ Սողոմոնեան,

Քարտուղարներ՝

Գործավար-քարտուղար՝ Արժանապատիւ Տ. Ղեւոնդ քահանայ Տեոմկին,

Ընդհանուր քարտուղար՝ Արմէն Սարգսեան:

Անցնող Տարուայ ընթացքում Ճեմարանի աշխատանքներն ընթացել են երեք հիմնական ուղղութիւններով. կրթութիւն եւ դաստիարակութիւն, գիտամանկավարժական-գրահրատարակչական հետազօտութիւններ, միջբուհական համագործակցութիւն եւ կապերի ամրապնդում:

Կրթութիւն եւ դաստիարակութիւն. Կրթութեան մասին աւանդական ընկալումը Մայր Աթոռի հոգեւոր-կրթական բարձրագոյն հաստատութիւնների ամենաբնորոշ գիծն է. այստեղ կրթութիւնն ու դաստիարակութիւնը զուգահեռ են, իրար փոխպայմանաւորող: Այս իմաստով հոգ է տարուել ոչ միայն ուսանողներին համապատասխան որակեալ կրթութեամբ ապահովել, այլեւ ճիշտ ոգով դաստիարակել: Այդ դաստիարակութեան մէջ իւրայատուկ կարեւորութիւն է տրւում ոչ միայն մեր ազգային արժէքների հետ ծանօթացմանը, այլեւ համամարդկային ձեռքբերումների մասին իմացութեանը, այն ամենին, ինչն ազնուացնում է մարդու հոգին, նպաստում քրիստոնեայ անհատի կերտմանը:

Յետահայեաց նայելով անցնող ուսումնական տարուայ արդիւնքներին, ականատես ենք լինում այն հարուստ հունձքին, որ, լիայոյս ենք, իր ուրոյն տեղը կգբաղեցնի մեր ազգային շտեմարանում:

2013-14 ուստարին Մայր Աթոռի հոգեւոր-կրթական հաստատութիւններում իւրայատուկ էր այն իմաստով, որ կիրառութեան մէջ մտաւ Բակալաւրիատի նոր ծրագիրը, որը հնարաւորութիւն է տալիս Մագիստրատուրայում ապահովել մասնագիտացում երեք ուղղութիւններով՝ Աստուածաշնչագիտութիւն, դաւանական եւ պատմական աստուածաբանութիւն: Ծրագրի առաջին փորձարկումն ապացուցեց, որ Ճեմարանը ճիշտ քաղաքականութիւն է որդեգրել կրթական որակը բարձրացնելու համար:

Այս տարի բակալաւրիատի քննութիւնը բարեյաջող յանձնել է 20 սան. Գէորգեանից 11, իսկ Վազգէնեանից 9: Մագիստրատուրա ընդունուել է 17 հոգի, 4՝ Աստուածաշնչագիտութեան հոսք, 5-ը՝ Պատմական աստուածաբանության, 8-ը՝ Դաւանաբանութեան: Այս հոսքերը համապատասխան հող են նախապատրաստում ասպիրանտական կրթութեան համակարգի ներդրման համար, որը Նորին Սրբութեան օրհնութեամբ Ճեմարանի տեսչութիւնը ձեռնարկել է 140-ամեակին ընդառաջ:

Ճեմարանն աւարտել են 32 ուսանող եւ Քահանայից պատրաստման լսարանի 21 սան, Առաքելական Եկեղեցու 53 զինուոր, որոնցից ձեռնադրուել է 7-ը եւ արդէն իսկ իր ծառայութիւնն է բերում Հայոց Եկեղեցու տարբեր թեմերում:

Անցնող տարուայ ընթացքում բազմաթիւ դասախօսութիւններ են կազմակերպուել Հանդիսութեանց սրահում, որոնցից կարելի է յիշել պրոֆեսոր Արամ Մարտիրոսեանին (Ֆրանսիա, Փարիզ-Նանտերի համալսարան), Ռէգին Յանզիկին (Ստրասբուրգի բողոքական համալսարան), Կալիստոս եպիսկոպոս Ուէրին (Օքսֆորդի համալսարան):

Լուրջ ուշադրութիւն է դարձուել ճանաչողական եւ մշակութային այցելութիւններին, որոնց ընթացքում ուսանողները հնարաւորութիւն են ունեցել ի մօտոյ ծանօթանալու արուեստի եւ մշակոյթի գործերին: Այս իմաստով մի շարք մշակութային երեկոներ եւ ճանաչողական հանդիպումներ են կազմակերպուել նաեւ արուեստի եւ գիտութեան բնագաւառի յայտնի ներկայացուցիչների հետ:

Մեծ առաջընթաց է գրանցուել Ճեմարանի երգչախմբային կատարումների որակի առումով: Այս տարուայ յունուարի 28-ին եւ 29-ին՝ Հայոց յաղթական բանակի տօնակատարութիւններին, Ճեմարանի երգչախումբը, Ռուբէն Ասատրեանի ղեկավարութեամբ փայլուն հանդէս եկաւ Օպերայի եւ բալետի թատրոնում՝ անմոռաց եւ հաճելի պահեր շնորհելով հոգեւոր-ազգային երգի սիրահարներին: Երգչախումբը իր գնահատելի մասնակցութիւնն է ունեցել «Թանգարանային օրուայ» միջոցառումներին եւ առանձին համերգով հանդէս եկել Կոմիտասի անուան կամերային երաժշտութեան տանը, եւ առանց աւելորդ համեստութեան կարելի է ասել, որ ճեմարանական երգչախումբն իր երկու տասնեակից աւելի կատարումներով մօտենում է պրոֆեսիոնալ կատարումների մակարդակին:

Կարեւորում է նաեւ արտալսարանային կրթութիւնն ու կրթութեան ասպարէզի նորագոյն նուաճումների ներմուծումը ճեմարանական կեանք: Այս տարի նոյնպէս շարունակուել են գրաբարի թարգմանական, ԹՕԷՖԼ-ի, գեր-

մաներէնի ուսուցման խմբակները, զուգահեռ հիմնուել են նկարչութեան, դաշնամուրային երաժշտութեան խմբակներ: Այս ամենը նպատակ ունի Ճեմարանում ստեղծելու մի միջավայր, որը հնարաւորութիւն կտայ իւրաքանչիւր ուսանողի բացայայտելու իր շնորհը, լիարժէք իրացնելու իրեն ուսանողական կեանքում: Այս շարքում կկամենայինք առանձնացնել խուլ եւ համրերի լեզուի ուսուցման խմբակի գործունէութիւնը, որը երկրորդ տարին է գործում: Այս խմբակի նպատակն է Ճեմարանցիների մէջ հոգատար վերաբերմունք դաստիարակել միջավայրի հանդէպ, մարդու հանդէպ:

Գիտահետազօտական աշխատանք. Հաշուետու տարում աւագ լսարանների ուսանողներն ուղարկուել են Մաշտոցի անուան մատենադարան, Գրականութեան եւ արուեստի թանգարան, ուր աշխատել են ձեռագիր մատեանների եւ անտիպ վաւերագրերի հետ՝ ձեռք բերելով ձեռագրագիտական եւ մատենագիտական գիտելիքներ, որ անշուշտ օգտակար կլինեն նրանց յետագայ պատմաբանասիրական պրպտումներում:

Հաշուետու տարում Ճեմարանը հրատարակութեան է պատրաստել 11 անուն գիրք, որ նուիրուելու են Ճեմարանի 140-րդ տարեդարձին: Դասագրքերն ու օժանդակ ձեռնարկները ամբիոնների կողմից համապատասխանաբար գրախօսուելուց, առաջարկուող փոփոխութիւնները մտցնելուց յետոյ են միայն երաշխաւորում հրատարակութեան: Եւ, ինչպէս կարելի է դատել հանրապետութեան գիտական եւ պարբերական մամուլի արձագանքներից, մեր հրատարակութիւնները լաւ ընդունելութիւն են գտել եւ արժանացել են ընթերցող լայն շրջանակների ուշադրութեանը:

Ճեմարանականների ստեղծագործական կարողութիւնները զարգացնելու նպատակով հիմնադրուած «Սերմնացան» մատենաշարի հերթական համարները նոյնպէս ընթացքի մէջ են:

Հարկ է ընդգծել, որ գիտական եւ հետազօտական աշխատանքներում մշտապէս ձգտել ենք ներգրաւել ուսանողներին ու ամբիոններին կցուած ասիստենտ-սարկաւագներին, որ կայուն եւ արդէն վստահ քայլերով ընթանում են հետազօտող դասախօսի դժուարին եւ անձուկ արահետով:

Ճեմարանում գիտահետազօտական աշխատանքը զարգացնելու համար ամերիկահայ բարերար Ջոն Փրիջեանի բարերարութեամբ հիմնովին թարմացուել եւ վերազինուել է համակարգչային լսարանը, նորաստեղծ ընթերցասրահը կահաւորուել է համակարգիչներով:

Միջբուհական համագործակցութիւն. Միջբուհական համագործակցութիւնը բաժանել ենք ներքին եւ արտաքին մասերի:

Ներքին մասով Ճեմարանի ուսանողները մասնակցել են միջբուհական գիտաժողովների եւ նստաշրջանների, ուր իրենց ելոյթներով ու զեկուցումներով բարձր են պահել ճեմարանական նախնի աւանդները, ինչը հաւաստում է միջոցառումների կազմակերպիչների յղած պատուոգրերով ու շնորհակալագրերով: Ժամանակը խնայելով՝ նշենք միայն Երեւանի պետական համալսարանի եւ Խաչատուր Աբովեանի անուան մանկավարժական համալսարանի գիտաժողովները: Այլեւս չենք խօսում ճանաչողական այցելութիւնների մասին, որոնց ընթացքում Ճեմարան են եկել տարբեր բուհերի ուսանողներ եւ դասախօսներ: Եւ այստեղ պէտք է կարեւորել ոչ այնքան գիտական եւ ուսումնական փոխշահաւէտ համագործակցութիւնը, որքան այն հանգամանքը, որ աշխարհիկ բուհերի ուսանողները հանդիպում ու շփւում են Ճեմարանի ուսանողութեան հետ՝ ձգտելով այդ կերպ լրացնել իրենց հոգեւոր կրթութեան պակասը:

Գէորգեան ճեմարանն իր առաքելութեամբ ձգտում է նաեւ համախմբող դեր ստանձնել բուհերի միջեւ: Վարդանանց տօնը, որ հինգ տարի շարունակ նշուել է Գէորգեան հոգեւոր ճեմարանի եւ Երեւանի պետական համալսարանի համատեղ միջոցառմամբ, Վեհափառ Հայրապետի օրհնութեամբ միւս տարուանից յաւակնում է դառնալ համաբուհական, եւ տարեցտարի աւելի մեծ թուով բուհերի ուսանողներ կընդգրկուեն ու կիրաւիրուեն հանդիսութիւններին:

Պատրաստում ենք Յուշագիր ստորագրել Հայաստանում ֆրանսիական համալսարանի հետ, որն ստանձնելու է նաեւ Ճեմարանում ֆրանսերէնի դասեր կազմակերպելու գործը:

Միջբուհական արտաքին կապերի զարգացման շրջանակներում մեզ մօտ վերապատրաստուելու են եկել Զագորսկի հոգեւոր ճեմարանի հայրաբանութեան դասախօս Սերգէյ Պանտելեեւը, ինչպէս նաեւ Կազանի հոգեւոր ճեմարանի դասախօս պրոֆեսոր Օլգա Չեւելան: Այս համագործակցութեան արդիւնքում Մոսկուայի հոգեւոր ակադեմիայում բացուել է Հայ Եկեղեցու պատմութեան ամբիոն: Ոչ միայն դասախօսների փոխանակման պրակտիկան է կիրառութեան մէջ մտել, այլեւ արդէն երկրորդ ուսանողն է սպասուում Ռուս Եկեղեցուց, որ ցանկութիւն ունի գրաբար սովորել՝ Հայ Եկեղեցու աստուածաբանական բնագրերն ուսումնասիրելու համար:

Ինչպէս նաեւ Ռումինիայի Հայոց թեմի առաջնորդ Տ. Տաթեւ եպիսկոպոս Յակոբեանի միջոցով առաջարկ է ստացուել համագործակցութեան պայմանագիր կնքելու Բուխարեստի պետական համալսարանի աստուածաբանութեան ֆակուլտետի հետ: Աշխատանքն ընթացքի մէջ է:

Վեհափառ Տէր, այսօր բոլորն են սկսել գիտակցել կրթութեան կարեւորութիւնը: Սակայն ցաւն ի սրտի նկատում ենք, որ շատերը կրթութիւնն առընչակցում են անձնական եւ անհատական բարօրութեան հետ՝ ձգտելով հասու լինել այնպիսի մասնագիտութեան, որի առկայութիւնը խոստանում է նիւթական ապահով վիճակ: Եւ եթէ անհատական ձգտումների պարագային նիւթական շահի հետապնդումը հասկանալի եւ ընդունելի է, ապա ժողովրդի կեցութեան եւ յարատեւման տեսանկիւնից կարելի է հետապնդել միայն հոգեւոր-ազգային շահեր՝ ինչպէս վարուել եւ պատգամել են մեզ մեր հայրերը: Եւ զարմանալի չէ, որ պետականութեան բացակայութեան տարիներին Մայր Աթոռի Գէորգեան հոգեւոր ճեմարանն իբրեւ սրբազան մասունք պահում, փայփայում եւ սերնդէսերունդ էր փոխանցում ամենակարեւորն ու նուիրականը, ամենաթանկը՝ ազգային դպրութիւնը, ազգային ոգին:

Այս է պատճառը, որ այսօր Ճեմարանի Տեսչութիւնն ու ողջ անձնակազմն առանձնակի պատասխանատուութեամբ եւ մեծագոյն լրջութեամբ են մօտենում իրենց պարտականութիւններին՝ փորձելով ուսանողներին փոխանցել գերակայ գաղափարը՝ գիտակցութիւնը, թէ ի՞նչ գործի, կամ, որ առաւելն է, ի՞նչ առաքելութեան են կոչուած իրենք: Նոյն այս պատճառով, չնայած Ճեմարանում առկայ անուրանալի յաջողութիւններին, աշխատակիցները երբեք չեն բաւարարուում, այլ ձգտում են նորանոր ասպարէզների ու բարձունքների:

Սակայն այս բոլոր ձեռքբերումները, որ գրանցել ենք յոբելենական տարուայ շեմին, անշուշտ չէին լինի, եթէ չլինէին Բարձրեալի կամքը եւ Նորին Սրբութեան հայրական հոգածութիւնը Ճեմարանի՝ թէկուզ ամենաչնչին խնդիրների նկատմամբ, ինչպէս եւ Տեսչութեան եւ դասախօսների անսահման նուիրումը ազգային դպրութեան գործին:

Ուստի գոհութեամբ փառք ենք վերառաքում, որ ձեռքերը, որոնք ստեղծեցին երկինքն ու երկիրը, վերին Նախախնամութեամբ Հայկազեան Տոհմի դպրութիւնը հաստատեցին ամուր ձեռքերում՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գէորգեան հոգեւոր ճեմարանում՝ Ազգի հոգեւոր մայրաքաղաքը վերածելով նաեւ ամենայն իմաստից մայրաքաղաքի: